

## ՏՈՔԹ. Ա. ՊԱՐՈՆԻԿԵԱՆ

ԵՒ

## ԽՐԻՍՏԵԱՆ ԶԵՄՈՐԱՆ

Ասկէ քանի մը տարի առաջ Թերթի-  
բէն լսեցինք Տոքթ. Պարոնիկեանի անու-  
նը. սակայն՝ ինչպէս իրողութիւն է մեր  
մէջ՝ Թերթիբուրն գրածին կարելի չըլլալով  
բայարձակ վստահիլ, մանաւանդ որ կու-  
սակցական հակառակութեան պատճառաւ  
աննպաստ գրուածներ ալ երեցան Թերթի-  
բուրն մէջ իր անուան շուրջ՝ ճշգրիտ դա-  
ղափար մը չունէինք իր մասին:

Բայց ժամանակ մը վերջ, երբ ինք ան-  
ձամբ հոս (Երուսաղէմ) եկաւ բանակցելու  
համար իր գործին և նպատակին շուրջ, մո-  
տէն ծանօթանալով և մտերիմ յարաբերու-  
թիւն մշակելով իրեն հետ՝ ճանչցանք բուն  
Պարոնիկեանը—անկեղծ և գործունեայ հայը:

Տոքթ. Արմինակ բնիկ Վանցի է, և  
անդամ եղած է տեղւոյն Երիտասարդաց  
Բարեսիրական Միութեան որուն անդամ-  
ները՝ վառվռուն երիտասարդներ՝ նպատակ  
ունէին կրօնական ու բարոյական ընտանի  
միջնորդութիւն մը ստեղծել Վանի մէջ: Պա-  
տերազմի ընթացքին, երբ ամէն ինչ կ'աւ-  
րուի, ինքը նոյն ոգիով և յարացոյցով  
Գերմանիա կը հաստատուի: Հոն կ'ուսա-  
նի աստուածաբանութիւն և բժշկութիւն,  
և ծանօթանալով Գերման ժողովուրդին և  
լեզուին, կը տեսնէ որ Գերման Միսիոնա-  
րութիւններէն ոմանք յանուն հայոց բա-  
րեւէր և հայասէր Գերմաններէ զրամ կը  
հաւաքեն և սակայն բուն նպատակին չեն  
գործածեր, այլ՝ իրենց կրօնական պրոպա-  
գանդին:

Աստի Տոքթ. Պարոնիկեան՝ ազգասի-  
րական ոգիէ մղուած՝ գործի կը լծուի Գեր-  
մանիոյ մէջ, քարոզելով «դուք ձեր զրամը  
հայասիրաբար կուտաք այս միսիոնարներուն  
Հայոցհամար, սակայն ասոնք իր բուն նպա-  
տակին չեն գործածեր, այլ՝ իրենց կրօնական  
պրոպագանդին կը շահագործեն: Եթէ կ'ու-  
զէք հայոց օգնել, ուղղակի հայոց միջո-  
ցաւ օգնեցէք իրենց, որպէսզի կարենան  
ինքզինքնին գտնել, և գործուած անիրա-  
ւութիւնը զարմանել:» Նախապէս հակա-

սակութիւնը կը սկսի անոնց և իր միջեւ,  
բայց Տոքթորը՝ ըլլալով ազգեցիկ խօսող  
մը, և գործունեայ ու եռանդուն քարոզիչ  
մը՝ կը գրաւէ բաւական թիւ մը իր կրօ-  
նական և շինիչ ճառերով: Նոյնիսկ կը հը-  
րաւիրուի խօսելու շատ մը եկեղեցիներու  
բեմերէն, և իր արեւելքցիի վառվռուն և-  
բեակայութեամբն ու անկեղծ խօսքերովը  
համբաւ մը կը չինէ իրեն՝ ի նպաստ իր  
գործին:

Եւ ահա ընկերութիւնը կը կազմուի  
Գերմանիոյ Հայ Լուսաւորչական Առաքելու-  
թիւն անունով, որ այժմ 31,000 հայասէր  
գերմանացիներ կը համբէ իր մէջ, և որուն  
նախագահը ճշմարիտ հայասէր՝ Կալստերէր  
անունով Գերման մըն է. ընկերութիւնը  
ունի իր պաշտօնաթերթը գերմաներէն լեզ-  
ուով որ ձրի կը զրկուի իր բոլոր անդամ-  
ներուն, և որուն անունն է այժմ «Նոր Հայաս-  
տան»: Վերջին թիւը մօտեցաւ լոյս կը տեսնէ  
բազմաթիւ պատկերներով, Երուսաղէմէն,  
Յուճաստանէն, Սիրիայէն և Եգիպտոսէն,  
լուսանկարուած նոյն ինքն Տոքթորին կողմէ  
իր ճամբորդութեան ընթացքին: Թերթը կը  
վարէ ինքը Պարոնիկեան, որուն կ'աշխա-  
տակցին իր տիկինն ու ընկերութեան  
անդամներէն ոմանք: Թերթին նպատակն  
է ծանօթացնել Հայ ազգն ու եկեղեցին  
Գերմաններուն, և զանոնք հրաւիրել օգ-  
նելու անոր զարգացման և բարձրացման:

Իր առաջին կարեւոր ձեռնարկը կ'ըլ-  
լայ ամսական տալով քննյ. մը ձեռնագրել  
տալ Յունաստանի ջրուած ժողովուրդին  
համար, Մազլուման Սրբազանի հովանա-  
ւորութեան տակ: Ապա բուն նպատակին  
զիմելով՝ կ'ուզէ հիմնել կրօնական դպրոց  
մը «Քրիմեան Ընտրան» անունով՝ Գեր-  
մանիոյ մէջ, ուր պիտի պատրաստուին  
հայ եկեղեցականներ՝ հայեցի ոգիով և հա-  
ւատքով ու բարձր ուսումով:

Այս տարի Տոքթորը Յունաստանէն  
Եգիպտոս անցնելով՝ տեսակցեցաւ Թորգոմ  
Ս. Արքեպիսկոպոսի հետ, և ապա Երուսա-  
ղէմ եկաւ. զմարտաբար դոցումած գտաւ  
Մեծ Պատրիարքին գերեզմանը, որուն  
խոստացած էր զալ անձամբ և հետը խոր-  
հըրգակցիլ իր գործի մասին: Միարա-  
նութիւնն ու Տեղապահ Մեսրոպ Սրբա-  
զան լաւ ընդունելութիւն ըրին իրեն:  
Բարեկէն Սրբազան խորհրդակցեցաւ իրեն

հետ: Ապա Թորգոմ Սրբազան Լճմիածին զրեց բացատրելով և երաշխաւորելով թէ սխալ և անճիշդ էին կասկածները Տոքթ. Պարոնիկեանի մասին, որպէսզի կաթողիկոսական հրամանը ստացուի իր բանալիք կրօնական ձեմարանին համար:

Տոքթորն ու իր ազնիւ և զորդացած տիկինը — որ իր ամբողջ հարստութիւնը նուիրած է ի նպաստ իր գործին — հոս անցուցին քանի մը շաբաթ: Ան գործունեայ և աշխոյժ միշտ խօսեցաւ ու բացատրեց իր գործն ու նպատակը, և միւլենոյն ատեն կրօնական շինիչ նիւթերու մասին խօսեցաւ այլևայլ առիթներով: Պէտք է ըսել որ զօրաւոր հաւատքի տէր և կրօնական փորձառութիւն ունեցող անձ մըն է ան:

Մենք անձամբ խօսեցանք իրեն հետ եւ վիճարանեցանք իր նպատակին ու գործին շուրջ. ինքն ալ հասկցած է՝ թէ պէտք է որ ամէնէն առաջ Կաթողիկոսին հրամանը առնուէր եւ Հայ Եկեղեցիի վերին իշխանութեան կամքովն ու գիտակցութեամբ կատարուէր ամէն բան, և այն ատեն ո՛չ մէկ անձնական ու կուսակցական զբաւանդութիւն կրնար արգելք ըլլալ իր գործին:

Տոքթորը դիւրութեամբ չէր ուզեր մեկնիլ Երուսաղէմէն, բայց պարտականութիւնը զինքը կը կանչէր այլուր, և սրտի զեղումով էր որ հեռացաւ մենէ:

Այժմ իր արձանագրած աշակերտները տարած է Գերմանիա, եւ սակայն հազիւ կէսը: Մեր կուսակցականները իր ձեռքէն յափշտակած են իր սաները, կարծես աւելի վեհ ծառայութեան մը համար. այս ալ պատուարեր նի շմբ մեր ժողովուրդի եկեղեցասիրութեան: Անոնք որ որպէս թէ կը տարփողեն ի լուր աշխարհի Հայ Եկեղեցիին փառքը, և անոր ինքնակոչ պաշտպաններ կը հանդիսանան՝ միշտ կ'աշխատին տկարացնել այդ Մարտիրոս Եկեղեցին, և իրենց անձնական ու հատուածական շահերուն ծառայեցնել դայն: Աւելորդ ճոռոմարանութիւններ պէտք չեն այլևս. այս ազգը ուրիշ ո՛չ մէկ յենարանի կրնայ կոթնիլ, եթէ ոչ՝ իր Սուրբ Եկեղեցիին ու Լուսաւորչի լոյս հաւատքին: Ա՛լ բաւ է, պէտք է պահ մը կանգ առնել եւ երկար մտածել իրականութեան վրայ, և ըստ այնմ քայլ առնել: Ապա թէ ոչ՝

ի զուր եւ անօգուտ բոլոր թափուած ճիւղերն ու աւելորդ պոռոտախօսութիւնները:

Մենք չենք կործներ որ Տոքթ. Պարոնիկեան յուսալքուի. ինչպէս մօտէն տեսանք զինքը՝ անիկա տասնի արգելքներու առջև կանգ առնող մարդ չէ, գիտնալով որ իր նպատակը անկեղծ է և գործը բարի:

Յաջողութիւն կը մաղթենք իր զործին և կորով իր հոգիին: Եւ վստահ ենք որ տասնի բարենպաստակ գործ մը չի մեռնիր: Միւս կողմէ՝ կը թելադրենք իր սիրելի սաներուն, որ խտապահանջ չըլլան օտար միջամտարի մէջ, և ո՛ր եւ է կերպով չվշտացնեն հայասէր ազնիւ գերմանացիները, ու հայ անունը վեր բռնեն օտարներուն առջև: Կէտ նպատակի դնեն Հայ Եկեղեցիին ծառայիլ և հաւատարիմ մնալ իրենց ուխտին՝ զոր փութկոտութեամբ հըրապարակաւ ալ կատարեցին, թէ օ Մենք 5 երիտասարդներս, նախանձախնդիր Հայ Եկեղեցւոյ բարենորոգման և ազգին բարեւաման, կ'ուխտենք հրապարակաւ, որ հոգով և մարմնով պիտի նուիրուինք այդ խտելին նուիրականութեան: Կ'աղօթենք որ Աստուած զիրենք զօրացնէ իրենց ուխտը կատարել կարենալու համար: Եւ այսպէս կ'աղմուի նիւրէնպէրի կրօնական հաստատութիւնը՝ իրրեւ լուսաշող վառաբան հայ հաւատքին:

ՍԻՈՆ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

